15
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2021

Luys Lnyu®

2017-2021ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ԵՐԵՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը Հայաստանի գերակա ճյուղերից մեկն է: Այն աշխատանքով է ապահովում զբաղվածների ավելի քան 24%-ին: Լինելով տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ գյուղատնտեսությունը Հայաստանում աչքի է ընկնում ցածր արդյունավետությամբ, բերքատվության ցածր մակարդակով, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների, նորարարությունների սահմանափակ կիրառմամբ, ինչն իր հետևանքներն է թողնում ինչպես գյուղատնտեսական արտադրանքի որակի և գնի, այնպես էլ արտահանման ծավալների վրա: Իսկ քանի որ ոլորտն ապահովում է երկրի համախառն ներքին արդյունքի 11%-ից ավելին, յուրաքանչյուր կառավարության գերխնդիրն է դառնում քայլեր ձեռնարկել ոլորտը զարգացնելու, ավելի մրցունակ դարձնելու համար: Այս առումով բացառություն չեն նաև 2017-2021 թվականների կառավարությունները, որոնք իրենց ծրագրերով առանձնահատուկ ուշադրություն են դարձրել ոլորտի զարգացմանը:

Այս փաստաթուղթը հանդիսանում է «2017-2021թթ. ընթացքում ՀՀ երեք կառավարությունների ծրագրային դրույթներով իրականացված աշխատանքների համեմատություն» շարքի հինգերորդ վերլուծությունը՝ ներկայացնելով գյուղատնտեսության զարգացման նպատակով երեք կառավարությունների ծրագրային դրույթները և դրանց իրականացման նպատակով ձեռնարկված քայլերը: Վերլուծությունում ուսումնասիրվել է միայն տվյալ կառավարության գործունեության ժամանակահատվածի համար նախատեսված քայլերը և կատարված աշխատանքները:

Մինչ այս, արդեն իսկ հրապարակվել են ԵՄ և ԵԱՏՄ հետ տնտեսական համագործակցության, գործարար միջավայրի բարելավման, ՓՄՁ զարգացման, արտահանման խթանման և ներդրումների ներգրավման և զբոսաշրջության զարգացման ուղղությամբ երեք կառավարությունների ներկայացրած ծրագրային դրույթների իրականացման վերաբերյալ վերլուծությունները:

ՀՀ կառավարության ծրագիր 2017-2022թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019-2024թթ.	ՀՀ կառավարության ծրագիր 2021-2026թթ.
Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի նպատակը գյուղատնտեսությունում տարեկան առնվազն 5 տոկոսով ոլորտի համախառն արտադրանքի ավելացումը... Բուսաբուծության ոլորտի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտը մշակել և 2018-2022 թվականների ընթացքում իրականացնել ՀՀ-ում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների պետական աջակցության ծրագիրը, այդ թվում՝ մինչև 2018 թվականի ավարտը հիմնելով 100 հա ինտենսիվ պտղատու այգիներ: Անասնաբուծության ճյուղի կայունացման և զարգացման համար երկարաժամկետ լուծումներ ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտը ձեռք բերել տեղական վերարտադրության տոհմային երինջներ և մատչելի պայմաններով տրամադրել տարաժամկետ վճարմամբ տավարաբուծական գյուղացիական տնտեսություններին՝ նախատեսելով հստակ չափորոշիչներ և ծախսվող միջոցների վերադարձի մեխանիզմներ. • ստեղծել և զարգացնել տոհմաբուծարաններ, մասնավորապես՝ մինչև 2017 թվականի ավարտը մշակել տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագիր:	• Կառավարությունը գործուն քայլեր է ձեռնարկելու չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ: Այս նպատակին հասնելու համար մշակվելու են խթաններ ու մեխանիզմներ: • Կառավարությունը գյուղատնտեսության ոլորտում ևս մեկ ռազմավարական նպատակ է ձևակերպում. այն է՝ Հայաստանում ոռոգման ջուրը նույնքան հասանելի և տարածված պետք է լինի, ինչպես էլեկտրամատակարարումն է տարածված և հասանելի: • Կառավարությունը միջոցներ կձեռնարկի նոր տեխնոլոգիաների հիման վրա առավել արդյունավետ հակակարկտային համակարգի լայնամասշտաբ ներդրման համար: Այս նպատակին հասնելու համար կառավարությունը պարտավորվում է բարձրացնել	Կառավարութան նպատակն է՝ • յուրաքանչյուր տարվա ընթացքում ինտենսիվ այգիներն ավելացնել 1000 հեկտարով, • առաջիկա 5 տարիներին ներդնել գյուղատնտեսական մշակաբույսերի ամբողջական ապահովագրությունը՝ ներառելով հիմնական մշակաբույսերը: • շարունակել սուբսիդավորել ապահովագրավճարի 50-60%-ը, ընդլայնել ապահովագրվող ռիսկերի ցանկը, աշխարհագրությունը՝ ներառելով բոլոր մարզերը, կստեղծվեն նախադրյալներ կենդանիների ապահովագրության ներդրման համար, • շարունակել սուբսիդավորել գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները՝ ապահովելով մատչելի ֆինանսական ռեսուրսներ, • 5 տարի ժամկետով ամբողջությամբ փոխհատուցել ոռոգման ջրի վարձավճարը մինչև 3 հեկտար հողատարածքներում կաթիլային և /կամ անձրևացման ոռոգման արդի համակարգերի ներդրման դեպքում՝ Կառավարության սահմանած կանոնների համաձայն, • շարունակել գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի օժանդակության ծրագիրը՝ յուրաքանչյուր տարի տեխնիկայի

Հակաանասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների և անասնաբուժական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտն իրականացնել շուրջ 6 մլն կանխարգելիչ պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ: Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի արդիականացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • 2017-2022 թվականների ընթացքում իրականացնել ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտը մատակարարել շուրջ 3 մլրդ դրամ արժեքով գյուղատնտեսական տեխնիկա՝ տարեկան 2 տոկոս տոկոսադրույքով. • 2017-2021 թվականների ընթացքում մասնավորի հետ համագործակցությամբ իրականացնել գյուղատնտեսական տեխնիկայի կայանների հիմնման ծրագիր: Կայանի աշխատանքների պիլոտային ծրագիրը մեկնարկել 2017 թվականին՝ աշնանացանի հետ: Գյուղատնտեսության ոլորտում վարկերի մատչելիության և նպատակայնության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • 2017-2022 թվականների ընթացքում շարունակել գյուղատնտեսության ոլորտին նպատակային	սուբսիդավորման մեխանիզմների հասցեականությունը՝ ապահովելով շահառու համայնքների կարիքների բավարարման հստակ մեխանիզմներ: • Կառավարությունը նաև գործուն քայլեր է ձեռնարկելու մեքենատրակտորային համակազմի թարմացման և Հայաստանի գյուղատնտեսության կարիքներն առավելագույնս բավարարելու ուղղությամբ: • Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների ավելացման ներուժն օգտագործելու գործում կառավարությունը նախատեսում է մշակել դեպի նոր շուկաներ արտահանմանն աջակցող մեխանիզմներ: • Նոր տեխնոլոգիաների և գիտական հենքի վրա հիմնված մրցունակ և արդյունավետ գյուղատնտեսություն ստեղծելու ճանապարհին կառավարությունը խնդիր է դրել նաև՝	հավաքակազմը թարմացնելով առնվազն 500 միավոր գյուղատնտեսական տեխնիկայով, • նպատակային սուբսիդավորման գործիքակազմով խթանել բարձրարժեք մշակաբույսերի արտադրությունը, օրգանական գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական ձեռնարկություններում տվյալների վերլուծության արդիական համակարգերի կիրառումը, • մինչև 70%-ով սուբսիդավորել բարձրորակ գարնանացանի և աշնանացանի սերմերի ձեռքբերումը՝ կառավարության սահմանած կանոնների համաձայն, • շարունակել վարկային, լիզինգային և փոխհատուցման գործիքներով օժանդակել ջերմատնային տնտեսությունների հիմնմանը, • ներդնել կենդանիների համարակալման և հաշվառման համակարգը և օժանդակել տոհմային գործի բարելավմանը, • շարունակել տրամադրել մատչելի ֆինանսական ռեսուրսներ անասնապահությանը՝ կառուցելու նոր սերնդի անասնաշենքեր, ձեռք բերելու անասնակեր, կենդանիներ, մասնավորապես տոհմային կենդանիներ, • շարունակել ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրման լիզինգի պետական աջակցության ծրագիրը, այդ թվում՝ կաթի և կաթնամթերքի արտադրության ու վերամշակման, ինչպես

վարկերի տրամադրման պետական աջակցության ծրագիրը՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների գյուղացիական տնտեսությունների համար սահմանելով առավելագույն նպաստավոր տոկոսադրույք, այդ թվում՝ մինչև 2017 թվականի ավարտը տարեկան 5 տոկոս տոկոսադրույքով տրամադրել շուրջ 7 մլրդ դրամի վարկեր: Անտառային ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտը մշակել անտառապահպանական ծառայությունների կատարելագործման, հսկողության և անտառների կառավարման արդյունավետության բարձրացման ծրագիր, իսկ 2018-2022 թվականների ընթացքում ապահովել ծրագրի իրագործումը: *<u>Սննդամթերքի անվտանգություն</u>* Սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտը ներդնել սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տրամադրման մեխանիզմներ: Մսի իրացման և գնման ոլորտում պարտադիր սպանդանոցային մորթի ապահովման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • 2017 թվականից սկսած՝ փուլային անցում կատարել պարտադիր սպանդանոցային մորթի:	- օժանդակել կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացմանը և սահմանել կոոպերատիվների կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ. - ստեղծել կրթական, գիտահետազոտական, արդյունաբերական կլաստերներ և նպաստել գյուղատնտեսության և ագրարային ոլորտի կրթական, գիտական, գիտաարտադրական և խորհրդատվական կենտրոնների համագործակցության խորացմանը. - աջակցել ագրոպարենային համակարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև սննդի անվտանգության համակարգերի ներդրմանը. - իրականացնել տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության, ինտենսիվ գյուղատնտեսության, անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրեր, ինչպես նաև աջակցել տոհմաբուծարանների ստեղծմանը.	նաև սպանդանոցների կառուցման խթանման համար, • սուբսիդավորվող վարկային և լիզինգային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև այլ միջոցներով աջակցել ագրովերամշակողներին՝ արտադրական կարողությունները հզորացնելու, նորագույն տեխնոլոգիաներ ներդնելու և մթերումները արդյունավետ կազմակերպելու համար, • խթանել տեղական սերմնաբուծությունը, • համաֆինանսավորել և ֆինանսավորել մեծածախ շուկաների և լոգիստիկ կենտրոնների ստեղծումը, համաֆինանսավորել և ֆինանսավորել Հայաստանում և Հայաստանի հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծումը, • կատարելագործել սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրությունը, մշակել պարենային անվտանգության զարգացմանն ուղղված ռազմավարություն, • խթանել գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործումը, չօգտագործվող հողերը շրջանառության մեջ դնելու և հողերը խոշորացնելու գործընթացը, • ապահովել կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրումը և շահագործումը,

Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտը մշակել, ըստ արտադրատեսակների և գործունեության իրականացման տեսակների, սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգի ներդրման հայեցակարգ, իսկ 2018-2020 թվականների ընթացքում ներդնել սննդի շղթայի օպերատորների ռեյտինգավորման համակարգ. • մինչև 2017 թվականի ավարտը մշակել սննդամթերքի անվտանգության ոլորտում ռիսկերի գնահատման մոդել, իսկ 2018-2021 թվականների ընթացքում ներդնել սննդամթերքի անվտանգության ոլորտներում ռիսկերի գնահատման մոդել և կիրառել ռիսկերի կառավարման մեխանիզմներ: Ներմուծվող սննդամթերքի որակի նկատմամբ վարչարարության պարզեցման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝ • մինչև 2017 թվականի ավարտը ներդնել սահմանային հսկողության համար «Մեկ պատուհան» համակարգ:	- նպաստել գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնմանը և ագրոտուրիզմի զարգացմանը. - ապահովել կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրումը. - ապահովել գյուղատնտեսական արտադրողների շրջանում գյուղատնտեսությանն առնչվող գիտելիքների և փորձի տարածման ու տեղեկատվության հասանելիության համակարգի ներդրումը. - ապահովել գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության համակարգի ներդրումը. - սահմանել գյուղատնտեսությանն աջակցության հիմնական սկզբունքները, մեթոդաբանությունը և ռազմավարությունը:	• ագրարային ոլորտի գիտակրթական հաստատություններին ցուցաբերել աջակցություն՝ շուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելու և վերապատրաստելու նպատակով, • Հայաստանի և հայկական արտադրանքի ճանաչելիությունը աշխարհում բարձրացնելու նպատակով խթանել ոլորտային ասոցիացիաների/խմբերի ստեղծումը՝ կոնկրետ տարածքում ծագած արտադրանքը ծագման տեղանվանմամբ և (կամ) աշխարհագրական նշմամբ մակնշելու և գրանցելու նպատակով: Արտադրանքի որակը բարձր պահելու և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Մտավոր սեփականության գործակալությունից դուրս կստեղծվեն հսկողություն և հավատարմագրում իրականացնող մարմիններ, որոնք կնպաստեն ոչ միայն հայկական արտադրանքի ավանդական շուկաների պահպանմանը, այլև նոր շուկաների նվաճմանը:

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է, որն ապահովում է երկրի համախառն ներքին արդյունքի 11,2%-ը (2020 թվականի տվյալներով): Ինչպես և տարածաշրջանի այլ երկրներում, Հայաստանում

գերակշռում են փոքր ֆերմերային տնտեսությունները՝ մասնատված փոքր հողակտորներով: Լինելով Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ 2017 թվականին գրանցած աճից հետո, գյուղատնտեսության ոլորտում շարունակում է անկումը՝ 2020 թվականին ապահովելով 33,4 մլրդ դրամի ավելի քիչ արտադրանք, քան 2019 թվականին:

Գծագիր 1. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2016-2020թթ., մլրդ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ընդ որում այդ անկումը նկատվում է թե՛ բուսաբուծության և թե՛ անասնաբուծության ոլորտներում:

Գյուղատնտեսության ոլորտում 2017 թվականին արձանագրված աճը թերևս կարելի է կապել նաև այդ ժամանակվա կառավարության գործունեության հետ:

Գծագիր 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ ըստ ոլորտների, 2016-2020թթ., մլրդ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի թիվ 11 արձանագրային որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը»: Այս ծրագրի շրջանակներում 2017 թվականին տրամադրվել է 157 գյուղատնտեսական տեխնիկա:

2017 թվականի մարտի 30-ին ընդունվեց «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության թիվ 342-Ն որոշումը, որով նախատեսվեց հատկացնել 700 մլն ՀՀ դրամ՝ գյուղատնտեսական տեխնիկայի կայանների գործունեության կազմակերպման ու զարգացման նպատակով: «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման ծրագիրը» հաստատվեց 2017 թվականի մայիսի 18-ին՝ ՀՀ կառավարության թիվ 20 արձանագրային որոշմամբ՝ հաստատելով «Իդաս» ՍՊԸ կողմից ներկայացված առաջարկը:

Նույն թվականին ՀՀ կառավարության սեպտեմբերի 14-ի թիվ 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը, ըստ որի

սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3 % տոկոսադրույքով: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվության՝ 2017 թվականի չորրորդ եռամսյակում այս ծրագրի շրջանակներում տրամադրվել է շուրջ 4.276,0 մլն դրամ գումարի վարկ:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 50 արձանագրային որոշմամբ հաստատվել է նաև անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգը, ռազմավարությունը և միջոցառումների ցանկը, որն անդրադառնում է նաև անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում կառավարման համակարգի կատարելագործմանը, կայուն կառավարման խնդիրներին:

2017 թվականին ՀՀ կառավարության դեկտեմբերի 21-ի թիվ 53 արձանագրային որոշմամբ ուժի մեջ մտավ ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման պիլոտային ծրագիրը:

2017 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունվել է նաև «Տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 53-24 արձանագրային որոշումը՝ նպատակ ունենալով Հայաստանում աճեցնել տավարի հոլշտին ու շվից ցեղերի և ոչխարի կորիդել ու սուֆֆոլկ ցեղերի մաքրացեղ կենդանիներ: Այդ նպատակով տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում Հայաստան էր ներմուծվել 2520 գլուխ կենդանիներ և երինջներ: Մշակվել էր նաև «Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը», որը հնարավորություն էր տալիս տարաժամկետ վճարման պայմանով Հայաստանի ֆերմերային տնտեսություններին հատկացնել եվրոպական երկրներից ներկրված կաթնատու և կաթնամսատու ուղղության տոհմային կենդանիներ: Այս ծրագիրը հետագայում հաստատվեց 2019 թվականին՝ ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 29-ի թիվ 327-Լ որոշմամբ:

Անասնահամաճարակային կայուն վիճակի ապահովման նպատակով 2017 թվականին իրականացվել է մոտ 5,5 մլն կանխարգելիչ պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ՝ ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված 6 մլն-ի փոխարեն:

Սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրավորման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2017 թվականի մարտի

4-ի թիվ 85-Ն հրամանով[1] սահմանվել էր սանիտարական անձնագրերի տրամադրման կարգը, սանիտարական անձնագրի օրինակելի ձևը և ժամանակացույցը: Համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվության՝ 2017 թվականի դեկտեմբերի 6-ի դրությամբ սանիտարական անձնագրեր էին տրամադրվել 120 միս-մսամթերք տեղափոխող և 548 հաց-հացաբուլկեղեն տեղափոխող փոխադրամիջոցների:

2017 թվականի մարտին ընդունվել էր նաև պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները և ժամանակացույցը, քայլեր էին ձեռնարկվել պարտադիր սպանդանոցային մորթին անցումը սահուն ապահովելու ուղղությամբ, ինչը սակայն կասեցվեց և այնուհետև հետաձգվեց 2018 թվականի իշխանափոխությունից հետո:

2017 թվականի ավարտին, միջազգային փորձագետների ներգրավմամբ, մշակվել էր նաև կաթնամթերք և մսամթերք արտադրող կազմակերպությունների մեթոդաբանությունը, որը կրկին իշխանափոխությունից հետո կասեցվեց:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ և ֆինանսավորմամբ, «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության տեխնիկական աջակցության» ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման կարողությունների ուժեղացում: Առաջին փուլով, որը նախատեսված էր ավարտել 2017 թվականի դեկտեմբերի վերջին, պետք է իրականացվեր ներկա իրավիճակի և երկրում առկա կարողությունների գնահատում: Այսօր սակայն այս գործընթացի ընթացքն անհայտ է:

Ապրանքների ներմուծման ընթացակարգերը և դրանց վրա ծախսվող ժամանակը կրճատելու նպատակով 2017 թվականի մարտի 3-ին սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում բացվել է սպասարկման նոր կենտրոն, որը գործելու էր «Մեկ պատուհան» սկզբունքով:

Եթե 2017 թվականի կառավարության ծրագրով սահմանված էին հստակ գործողություններ, կոնկրետ ժամկետներով, ապա 2019 թվականի կառավարության գյուղատնտեսության բաժինն աչքի էր ընկնում ընդհանուր բնույթի հայտարարություններով և ցանկություններով: Գյուղատնտեսության ոլորտում 2019 թվականի կառավարության կարևորագույն ձեռքբերումը կարելի է համարել ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը և ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119923

ծրագիրը, ինչը հաստատվել է ՀՀ կառավարության 19.12.2019թ. թիվ 1886-Լ որոշմամբ: Այս փաստաթուղթը տալիս է գյուղատնտեսության ոլորտի զարգացման տեսլականը և հիմնական ուղղությունները՝ առաջիկա տասը տարվա համար:

Ռազմավարությամբ նախատեսված են այնպիսի գործողություններ, ինչպես, օրինակ՝ կարգավորել հողերի խոշորացման իրավական դաշտը և իրականացնել կառուցակարգի ներդրման ծրագիր կամ՝ մշակել թվային գյուղատնտեսությանն ուղղված ռազմավարություն և գործողությունների պլան, որոնք որոշ չափով առնչվում են նաև կառավարության ծրագրի դրույթներին: Ընդհանրապես, չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը նպատակայնորեն օգտագործելու նպատակով, ՀՀ կառավարությունը 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Լ որոշմամբ հաստատել է «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը»: Հարկ է նշել սակայն, որ այս ծրագրով նախատեսված գործողությունների մի որոշ մասը դեռևս չի իրականացվել: Մասնավորապես՝ չի ընդունվել «Գյուղատնտեսական գործունեության մասին» օրենքը, «Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները և որպես չօգտագործվող հողեր հաշվառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, չի ստեղծվել հողային բանկը և այլն: Այսինքն՝ կառավարության ծրագրով նախատեսված այս գործողությունը չի իրականացվել:

Չի իրականացվել նաև կառավարության մյուս ռազմավարական նպատակը՝ «ոռոգման ջուրը նույնքան հասանելի և տարածված պետք է լինի, ինչպես էլեկտրամատակարարումն է տարածված և հասանելի»: 2021 թվականին երաշտի պատճառով մի շարք համայնքներում ոռոգման հետ կապված խնդիրները և ջրի անհասանելիությունը դրա վառ վկայությունն են: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ գրեթե բոլոր մարզերում առկա են ոռոգման ջրի ցանցի հետ կապված խնդիրները, չի լուծվել ոռոգման ջրի պատշաճ կառավարման հետ կապված խնդիրները, ինչի հետևանքով առկա են ջրի զգալի կորուստներ: Ճիշտ է, ՀՀ կառավարության սուբվենցիոն ծրագրերով նախատեսված է ոռոգման համակարգի կառուցման (նորոգման) ծրագրերի իրականացում, սակայն 2019-2021 թվականների ընթացքում իրականցվել է ընդամենը 80 այդպիսի ծրագիր:

Նոր տեխնոլոգիաների հիման վրա հակակարկտային համակարգերի լայնամասշտաբ ներդրման նպատակով ՀՀ կառավարության կողմից 2019 թվականին հաստատվել էր «ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորում» ծրագիրը, որն ուժը կորցրած կճանաչվի 2022 թվականի հունվարի մեկից և կփոխարինվի Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման,

արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրով[2]: Այս ծրագրով խրախուսվում է կարկտապաշտպան ցանցերի ներդրումը, սակայն չկան հակակարկտային համակարգի ներդրմանն ուղղված հստակ մոտեցումներ:

Մեքենատրակտորային համակազմի թարմացմանն է ուղղված «ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիրը, ինչն ընդունվել և գործում էր դեռևս 2017 թվականից, թեև 2017 թվականի համեմատ 2019 և 2020 թվականներին ավելացել են շահառուների թվաքանակը:

Արտադրանքի արտահանման ծավալների ավելացում, դեպի նոր շուկաներ արտահանմանն աջակցող մեխանիզմների մշակման առումով 2019 թվականի կառավարության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների 107-րդ կետով՝ գյուղատնտեսական և գինեգործական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանն աջակցող մեխանիզմների մշակում և ներդրում, նախատեսված է երկու միջոցառում, որոնց վերջնաժամկետները համապատասխանաբար մինչև 2023թ. 4-րդ եռամսյակն ու մինչև 2022թ. 1-ին կիսամյակն են: Այս ուղղությամբ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են որոշ աշխատանքներ, սակայն դրանք նախապատրաստական աշխատանքներ էին և այսօրվա դրությամբ այդ արդյունքներն ապահովված չեն: Իսկ կառավարության կողմից նկատելի չեն գյուղատնտեսական ապրանքների արտահանման խրախուսմանն ուղղված որևէ գործուն մեխանիզմի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանք:

Կրթական, գիտահետազոտական, արդյունաբերական կլաստերների ստեղծումը 2019 թվականի կառավարությունը նախատեսում էր իրականացնել 2021-2023 թվականների ընթացքում՝ սկսելով «Գյուղատնտեսության ոլորտում գիտակրթական-արտադրական կլաստերների ստեղծման հայեցակարգի և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ, ինչը մինչ օրս չի ընդունվել:

Գյուղատնտեսական արտադրողների շրջանում գյուղատնտեսությանն առնչվող գիտելիքների և փորձի տարածման ու տեղեկատվության հասանելիության համակարգի վերաբերյալ մանրամասն անդրադարձ է կատարվել Գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրությունում: Ի լրումն ներկայացված ուսումնասիրության՝ անհրաժեշտ է հիշատակել նաև էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսության խորհրդատվության

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154724

մոնիթորինգի և նորարարությունների վարչության մարզային ստորաբաժանումներում 2021 թվականին իրականացված կրճատումները:

Կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացման առումով, թեև պետական աջակցության ծրագրերում բարենպաստ պայմաններ են նախատեսված կոոպերատիվների համար, սակայն դրանք շատ չնչին ազդեցություն են ունեցել կոոպերատիվներին աջակցելու և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման գործում:

2018 թվականին ընդունված «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցություն» ծրագիրը, Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը (ընդունված 2017 թվականին), ինչպես նաև պետական աջակցության այլ ծրագրեր, որոշակի փոփոխություններով և լրացումներով, ուղղված են ագրոպարենային համակարգի սարքավորումների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը: Սակայն պետք է նշել, որ 2019 թվականին չի օգտագործվել գյուղատնտեսության զարգացման և ագրոպարենային համակարգի կատարելագործման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարի շուրջ 36%-ը: Չեն իրականացվել այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը» կամ «Գյուղատնտեսությամբ զբաղվողներին ուղղակի աջակցության տրամադրումը»:

2020 թվականին թերակատարվել են այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են՝

- Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագիր – 20,8%,
- Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր – 19%,
- Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցություն – 72,7%,
- Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար պետական աջակցություն – 59,8%:

Թեև 2019 թվականին հիմնադրվել է Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունը և հաստատվել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը, սակայն գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ճիշտ ձևավորման և կազմակերպման տեսանկյունից առկա են

ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչընդոտում են համակարգի ձևավորմանը և կայացմանը: Ավելին, 2019 թվականին 0,12%-ով է իրականացվել «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը», իսկ 2020 թվականին այդ ծրագիրն իրականացվել է ընդամենը 16,8%-ով: Մեր ուսումնասիրությունները ևս վկայում են այս համակարգի նկատմամբ ֆերմերների շրջանում դեռևս գոյություն ունեցող անվստահության մասին:

Տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացմանն ուղղված խոստումը կարելի է համարել մասամբ կատարված, քանի որ ծրագրի մեկնարկի հետ կապված քայլեր կատարվել են, սակայն ծրագիրը չի ունեցել հետաքրքրություն պոտենցիալ դիմորդների շրջանում և տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի մեկնարկից (2019թ.) հետո մինչև 2020 թվականի ավարտը որևէ գումար չի հատկացվել:

2021 թվականի կառավարության ծրագրով նախատեսված են գործողություններ, որոնք կարող են նպաստել ոլորտի զարգացմանը՝ մեծածախ շուկաների և լոգիստիկ կենտրոնների ստեղծում, հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծում, կոնկրետ տարածքում ծագած արտադրանքը ծագման տեղանվանմամբ և (կամ) աշխարհագրական նշմամբ մակնշում և գրանցում, գիտակրթական հաստատությունների աջակցության տրամադրում և այլն: Սակայն այս ամենը ենթադրում է զգալի ֆինանսական ռեսուրսների ներդրում կամ մասնավոր ներդրումների խթանում:

2022 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծում նախատեսված է 500 մլն դրամ՝ պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ ժամանակակից լոգիստիկ կենտրոնի ստեղծման նպատակով: Թեև դա պետք է իրականացվի ԵՄ աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, այսօր դեռևս անհասկանալի է թե ինչ չափորոշիչներ են դրված այդպիսի կենտրոնի ստեղծման հիմքում:

Արտադրանքի ծագման տեղանվանման և աշխարհագրական նշման մակնշումը և գրանցումը կառավարությունը նախատեսում է իրականացնել ոլորտային ասոցիացիաների (խմբերի) ստեղծումը խթանելու միջոցով: Ոլորտային ասոցիացիաների ստեղծման գործառույթի ստանձնումը կամ դրանց ստեղծման խթանումը արդեն իսկ սխալ ուղղություն է, քանի որ դրանք չպետք է լինեն պարտադրված, այլ պետք է ձևավորվեն կարիքից ելնելով:

Կառավարության գործողությունների մի խումբն ուղղված է արդեն իսկ գործող ծրագրերի շարունակականության ապահովմանը, ինչը իրենից չի ներկայացնում նոր գաղափար կամ քայլեր:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Մտավոր սեփականության գործակալությունից դուրս հսկողություն և հավատարմագրում իրականացնող մարմինների ստեղծման գաղափարը, *«որոնք կնպաստեն ոչ միայն հայկական արտադրանքի ավանդական շուկաների պահպանմանը, այլև նոր շուկաների նվաճմանը»*: Հետաքրքիր է, թե ինչպես են հավատարմագրման կամ հսկողության մարմինները պահպանելու ավանդական շուկաները կամ նպաստելու նոր շուկաների նվաճմանը, եթե դրանց գործառույթները ամբողջությամբ տարբերվում են շուկաների նվաճման գործառույթներից: Նոր շուկաների նվաճմանը նպաստելը հիմնականում արտահանման խրախուսման կառույցների գործառույթներից է:

Մի շարք գործողություններ հայտնվել են կառավարության ծրագրում, քանի որ դրանք նախատեսվել էին դեռևս 2019 թվականի կառավարության կողմից, սակայն չէին իրականացվել՝ կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում, գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման խթանում: 2022 թվականի պետական բյուջեով արդեն իսկ գումար է նախատեսված խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման նպատակով: Մնում է հավատալ, որ նոր կառավարությունը կիրականացնի այս քայլերը, որոնց կատարումը ձախողվել էր նախորդ կառավարության օրոք:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Եթե 2017 թվականի կառավարության ծրագրով սահմանված էին հստակ գործողություններ, կոնկրետ ժամկետներով, ապա 2019 թվականի կառավարության գյուղատնտեսության բաժինն աչքի էր ընկնում ընդհանուր բնույթի հայտարարություններով և ցանկություններով:
2. 2017 թվականին ընտրված կառավարությունը գրեթե ամբողջությամբ իրականացրել է տվյալ տարվա համար նախատեսված աշխատանքները, իսկ 2018 թվականի իշխանափոխությունից սկսված բարեփոխումների մի մասը կասեցվել կամ հետաձգվել է:
3. Գյուղատնտեսության ոլորտում 2019 թվականի կառավարության միակ լուրջ ձեռքբերումը կարելի է համարել ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը և ռազմավարության կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների ծրագիրը:
4. 2019 թվականի կառավարությունը, սակայն, չի իրականացրել ռազմավարությամբ և իր ծրագրով նախատեսված մի շարք կարևոր աշխատանքներ՝ չի մշակվել «Գյուղատնտեսական գործունեության մասին» օրենքը, ոռոգման ջուրը նույնքան

հասանելի և տարածված չի դարձել, ինչպես էլեկտրամատակարարումն է, չկա հակակարկտային համակարգի ձևավորման հստակ մոտեցում:

5. Կառավարության կողմից նկատելի չեն գյուղատնտեսական ապրանքների արտահանման խրախուսմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքներ:
6. 2019 թվականին չի օգտագործվել գյուղատնտեսության զարգացման և ագրոպարենային համակարգի կատարելագործման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարի շուրջ 36%-ը: Չեն իրականացվել ՀՀ պետական բյուջեով նախատեսված այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը» կամ «Գյուղատնտեսությամբ զբաղվողներին ուղղակի աջակցության տրամադրումը»:
7. 2019 թվականին ընդամենը 0,12%-ով է իրականացվել «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը», իսկ 2020 թվականին այդ ծրագիրն իրականացվել է ընդամենը 16,8%-ով:
8. 2021 թվականին ընտրված կառավարության ծրագրով նախատեսված են ինչպես նախորդ կառավարության կողմից չիրականացված քայլեր (կենդանիների համարակալման և հաշվառման համակարգի ներդրում, գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման խթանում), այնպես էլ նոր միջոցառումներ, որոնք կարող են խթանել գյուղտնտեսության զարգացումը (մեծածախ շուկաների և լոգիստիկ կենտրոնների ստեղծում, հիմնական շուկաներում հավաքական պահեստների ստեղծում և այլն): Այս և մյուս միջոցառումները պահանջում են ինչպես ֆինանսական, այնպես էլ մարդկային և մասնագիտական ռեսուրսների զգալի ներդրումներ: Մնում է հուսալ, որ այս կառավարությունն ի վիճակի կլինի իրականացնել խոստացած միջոցառումները, կգտնի անհրաժեշտ ռեսուրսների և չի ձախողվի նախորդ (2019 թվականի) կառավարության նման:

Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն

(շարունակելի)

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*